ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

01.08.2011 թ. - 01.08.2012 թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՂԱՎՆԱԶՈՐ 2012թ.

Հարգելի Աղավնաձորցիներ 2011թ. վերջին հինգ և 2012թ. առաջին յոթ ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2010թ. դեկտեմբերի 23-ին համայնքի ավագանին իր N38-Ն որոշմամբ ընդունել է 2011թ.բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 21մլն 794 հազար 600 դրամ,ծախսերը՝ 22մլն 66 հազար 700 դրամ: Պակասորդը կազմել է 272 հազար 100 դրամ,որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Աղավնաձորի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 2.900 հազար դրամ : 2011թ. հողի հարկը հավաքագրվել է 2մլն 901 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100,05% - ը: 2011թ. գույքային հարկերը հավաքագրվել են 100,3 %- ով, որը բացարձակ թվով կազմել է 2մլն 902 հազար դրամ:

2011թ. դեկտեմբերի 14-ին համայնքի ավագանին իր N 35-Ն որոշմամբ ընդունել է 2012թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 21մլն 490 հազար 400 դրամ, ծախսերը 30 մլն 204 հազար 600 դրամ,որից 6 մլն 850 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեից:

Հողի հարկը կազմել է 3մլն 50 հազար դրամ, որից առաջին կիսամսյակում հավաքագրվել է 1մլն 27 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 33,7 % - ը:

Գույքային հարկեր՝ 4մլն 100 հազար դրամ, որից առաջին կիսամսյակում հավաքագրվել է 1մլն 583 հազար 400 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 38,6 % - ը:

2) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 2280 հազար դրամի օգնություն:

3) ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Աղավնաձորի միջնակարգ դպրոցի 2011-2012 թթ. ուս. տարվա աշակերտներին և շրջանավարտներին տրվել է 550 հազար դրամի նվերներ և էքսկուրսիայի ճանապարհածախս: Մշակույթի տանը գործում են պարի և երգի, դաշնամուրի, ասեղնագործության խմբակներ,գործում է գրադարանը:

4) ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Աղավնաձոր համայնքը ստացել է ջրօգտագործման թույլտվություն, որի համար ամեն եռամսյակ մուծվում է 34, 7 հազար դրամ վճար: Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 104,0 հազար դրամ: